# ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ու Մ

***«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/25» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին***

«09» սեպտեմբերի 2024թ. թիվ 13

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի և 2-րդ մասի պահանջներով, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետը և «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/25» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2024թ. օգոստոսի 28-ի թիվ 3 արձանագրության 1.3.3.-րդ կետը՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/25» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2.

| Մասնակցի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը | | | ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը |
| | | | խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը | խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը | որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից | |
| «ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ | 04436817 | ք. Վաղարշապատ 1101, Մոալյան փ. 40Ա | «ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 6-րդ և 11-րդ չափաբաժինների մասով գնահատվել է անբավարար և մերժվել՝ | - | - | «09» սեպտեմբերի 2024թ. թիվ 13 որոշում «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/25» |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով, մասնավորապես «ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ-ի կողմից 6-րդ և 11-րդ չափաբաժիններով առաջարկվող ապրանքների բնութագրերը չեն համապատասխանել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/25» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին: | | | |

*Սույն որոշման հիմքում առկա («ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/25» ծածկագրով գնման ընթացակարգին առնչվող) բոլոր փաստաթղթերը հրապարակված են www.procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրում:*

3. Պատասխանատու ստորաբաժանմանը՝ ապահովել սույն որոշման տրամադրումը ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին՝ կայացման հաջորդող օրը:

**ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ** **Ն. ԳԱԼՍՏՅԱՆ**